ԿԱՐԱՊԵՏ ՄԱՏԻՆՅԱՆ

Ծնվել է 1897թ., Կարսի մարզի Կիզիլ-Չախչախ գյուղում:
1916թ. զորակոչվել է ցարական բանակ:
Ծառայությունն ավարտելուց հետո վերադարձել է Հայաստան, աշխատել հայկական երկաթուղում (1918-1924), ապա նշանակվել է Երկաթուղու շահագործման բաժնի պետի տեղակալ (1926թ.), Անդրերկաթգծի 3-րդ տեղամասի Հայաստանի լիազոր (1927-1928), հետո՝ <<Արթիկտուֆ>> տրեստի կառավարիչ: 1933-1936թթ. եղել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահը, հետո նշանակվել Դավալուի (այժմ՝ Արարատ) ցեմենտի գործարանի տնօրեն (1936):
1938թ. դատապարտվել է գնդակահարության, 1956թ. հետմահու արդարացվել է: